ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ
ՓԱՍՏԱԹՂԹԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ
ՄԱՐԳԱՐԻՏԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ

Հաշվետվություն

Հարգելի տիկին Հայրապետյան,

Հայտնում եմ Ձեզ, որ 2024 թվականի փետրվարի 04-ից մինչև 2024 թվականի մայիսի 06-ը ընկած ժամանակահատվածում իրականացրել եմ հետևյալ աշխատանքները՝

✓ ուսումնասիրել եմ պետական վերահսկողության և վարչական վարույթներին առնչվող կազմված փաստաթղթերում առկա անհամապատասխանությունները, թերությունները և խնդիրները, իրականացրել ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումների ուսումնասիրություն:

Հայտնաբերել եմ հետևյալ թերությունները՝ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության մեջ խախտումը չի նկարագրվում կամ անորոշ է նկարագրվում, վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը կազմվում է լիազոր անձի անունով, մինչդեռ լիազորված անձը պատասխանատու անձ չէ, քանի դեռ հրաման չկա, իրավունք ունի միայն ստորագրելու, հարցերի շրջանակից դուրս հարցեր են ստուգվում և որպես խախտում արձանագրվում, ինչը արգելվում է, վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրությունում և ստուգման ակտում հոդվածները սխալ են նշված, ստուգման ակտի հիման վրա զեկուցագիր չի գրվել անձանց աշխատանքի չթույլատրելու մասին, ստուգման ակտի նախագիծը կազմելու ժամկետի խախտում: Վճռաբեկ դատարանի նախադեպերը վերը նշված խախտումների մասով հետևյալն են՝ վարչական իրավախախտման կազմմանը ենթադրյալ իրավախախտի պարտադիր մասնակցություն, վարչական ակտի հիմնավորվածություն:

✓ ներկայացնում եմ հետևյալ առաջարկությունները՝ հանձնարարել մարզային կենտրոնների ղեկավարներին իրենց գործառույթների շրջանակում կազմակերպել նշված թերությունների վերացումը:

ԻՐԱՎԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՓԱՍՏԱԹՂԹԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՓՈՐՁԱԳԵՏ՝

ՏԻԳՐԱՆ ՕՀԱՆՅԱՆ

06.05.2024թ.